ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՄԱԱՊՁԲ-ԱԻՆ-22/3

ք. Երևան «23» Նոյեմբերի 2022թ.

Արտակարգ իրավիճակների նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարար Լ. Միրզախանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Արմիֆուդ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Խ. Օյանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Հննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 1 480 050 (մեկ միլիոն չորս հարյուր ութսուն հազար հիսուն) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի

կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Արտակարգ իրավիճակների նախարարություն	«Արմիֆուդ» ՍՊԸ
ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյան փող. 109/8	ՀՀ ք.Երևան, Բաշինջաղյան փ.173, բն 11
ՖՆ գործառնական վարչություն	ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 900011001352	Հ/Հ 2500010910090100
ՀՎՀՀ 00153247	ՀՎՀՀ՝ 01306154
Լ. Միրզախանյան	Հ. Օհանյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
« 23 » նոյեմբեր 2022թ. կնքված
ՀՄԱՊՁԲ-ԱԻՆ-22/3ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի										
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	Մատակարարման		
								հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
1	15897100/2	Դաշտային Օրապարեն	Հավելված 1.1	դրամ	3 795	1 480 050	390	Ք. Երևան, Դավիթաշեն 4-րդ թաղ, Ա. Միկոյան 109/8	390	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20 օրացուցային օր

ԳՆՈՐԴ
Արտակարգ իրավիճակների նախարարություն
ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյան փող. 109/8
ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011001352
ՀՎՀՀ 00153247

Լ. Միրզախանյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Արմիֆուդ» ՍՊԸ
ՀՀ ք.Երևան, Բաշինջաղյան փ.173, բն 11
ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 2500010910090100
ՀՎՀՀ 01306154

Ի. Օհանյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1.1
«23» Դեկտեմբեր 2022թ. կնքված
ՀՄԱՊՁԲ-ԱԻՆ-22/3 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ*

N	Գնման առարկայի անվանումը	Տեխնիկական բնութագիրը
		Չոր օրապահիկ, այդ թվում՝
1	Փխրուն հաց /թխվածքաբլիթ՝ 1-ին դասի ցորենից	Չոր թխվածքաբլիթներ՝ ГОUS 14032-2017-ին համապատասխան, պարզ, խոնավության պարունակությունը ոչ ավելի, քան 11%, հաստությունը ոչ ավելի, քան 11 մմ: Յուրաքանչյուր փաթեթում՝ 5 հատ, ոչ պակաս, քան 50 գ, պոլիէթիլենային հերմետիկ փաթեթներմամբ: Պահպանման ժամկետն արտադրության օրվանից առնվազն 24 ամիս, մատակարարաման օրվանից առնվազն՝ 80%: Յուրաքանչյուր փաթեթի վրա նշվում է արտադրության ամսաթիվը (օր, ամիս, տարի: Պիտակը պետք է պարունակի սննդային և էներգետիկ արժեքի բաղադրությունը և ցուցանիշները: Անվտանգություն և պիտակավորում՝ համաձայն ТР ТС 021/2011 և 022/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի, 9-րդ հոդվածի.
2	Պահածոյացված ապուրներ/ տարբեր տեսակների	1. Բորշչ տավարի մսով՝ մանրէազերծված պատրաստի մթերք Բաղադրությունը՝միս տավարի, կարտոֆիլ, գազար, կաղամբ, սոխ գլուխ, բազուկ, բուսայուղ, քացախ, շաքար, աղ, դափնու տերև, սև պղպեղ հատիկավոր, տոմատի մածուկ, կանաչի: Սննդային և էներգետիկ արժեքը 100 գ-ում՝ սպիտակուցներ՝ 3,8-4գ , ճարպեր՝ 3,0-3,2գ, ածխաջրեր՝ 2-5,2, 51-63/214-264 կկալ/կՋ: Պահպանման պայմանները՝ պահել չոր, արևի ուղիղ ճառագայթներից պաշտպանված, լավ օդափոխվող շինությունում 0-ից +25 °C ջերմաստիճանի և օդի 75%-ից ոչ ավել հարաբերական խոնավության պայմաններում՝ 24 ամիս: Տարան բացելուց հետո պահել (4±2)°C– պայմաններում՝ 24 ժամից ոչ ավել: Խորհուրդ է տրվում տաքացնել: Արտադրության ժամկետը նշված է տարայի հատակին/կափարիչին: Պահպանման ժամկետը մատակարարման օրվանից առնվազն՝ 80%: ՏՊ ԱՄ 52367966.8666-2020 Քաշն առնվազն՝ 300գ: 2. Ապուր խարչո տավարի մսով՝ մանրէազերծված պատրաստի մթերք Բաղադրությունը՝ բրինձ, միս տավարի, սոխ գլուխ, բուսայուղ, շաքար, աղ, տոմատի մածուկ (լոլիկ), սխտոր, խմելի-սունելի, սև հոտավետ պղպեղ: Սննդային և էներգետիկ արժեքը 100 գ-ում՝ սպիտակուցներ՝ 4-5 , ճարպեր՝ 2-3, ածխաջրեր՝ 5-7, 54-75/226-314 կկալ/կՋ: Պահպանման պայմանները՝ պահել չոր, արևի ուղիղ ճառագայթներից պաշտպանված, լավ օդափոխվող շինությունում 0-ից +25 °C ջերմաստիճանի և օդի 75%-ից ոչ ավել հարաբերական խոնավության պայմաններում՝ 24 ամիս: Տարան բացելուց հետո պահել (4±2)°C – ի պայմաններում 24 ժամից ոչ ավել: Խորհուրդ է տրվում տաքացնել Արտադրության ժամկետը նշված է տարայի հատակին/կափարիչին: Պահպանման ժամկետը մատակարարման օրվանից առնվազն՝ 80%:

		ՏՊ ԱՄ 52367966.8666-2020 Քաշն առնվազն՝ 300գ: 3. Ապուր հավի մսով և մակարոնով՝ մանրէազերծված պատրաստի մթերք Բաղադրությունը՝ մակարոն, հավի փափկամիս, կարտոֆիլ, գազար, սոխ գլուխ, սամիթ, բուսայուղ, հավի արգանակ, աղ, դափնու տերև, սև հոտավետ պղպեղ: Սննդային և էներգետիկ արժեքը 100 գ-ում՝ սպիտակուցներ՝ 4-5,6 գ, ճարպեր՝ 2,5-5 գ, ածխաջրեր՝ 4,4-6 գ, 63-85/262-356 կկալ/կՋ: Պահպանման պայմանները՝ պահել չոր, արևի ուղիղ ճառագայթներից պաշտպանված, լավ օդափոխվող շինությունում 0-ից +25 °C ջերմաստիճանի և օդի 75%-ից ոչ ավել հարաբերական խոնավության պայմաններում՝ 24 ամիս: Տարան բացելուց հետո պահել (4±2)°C – ի պայմաններում 24 ժամից ոչ ավել: Խորհուրդ է տրվում տաքացնել: Արտադրության ժամկետը նշված է տարայի հատակին/կափարիչին: Պահպանման ժամկետը մատակարարման օրվանից առնվազն՝ 80%: ՏՊ ԱՄ 52367966.8666-2020 Քաշն առնվազն՝ 300գ: 4. Սպաս՝ մանրէազերծված պատրաստի մթերք Բաղադրությունը՝ մածուն, թթվասեր, ցորենաձավար, հավկիթ, ցորենի այլուր, աղ, համեմ: Սննդային և էներգետիկ արժեքը 100 գ-ում՝ սպիտակուցներ՝ 2-3,5գ, ճարպեր՝ 2-2,7գ ածխաջրեր՝ 5-6, 46-62/192-261 կկալ/կՋ Պահպանման պայմանները՝ պահել չոր, արևի ուղիղ ճառագայթներից պաշտպանված, լավ օդափոխվող շինությունում 0-ից +25 °C ջերմաստիճանի և օդի 75%-ից ոչ ավել հարաբերական խոնավության պայմաններում՝ 24 ամիս: Տարան բացելուց հետո պահել (4±2)°C – ի պայմաններում 24 ժամից ոչ ավել: Խորհուրդ է տրվում տաքացնել Արտադրության ժամկետը նշված է տարայի հատակին/կափարիչին: Պահպանման ժամկետը մատակարարման օրվանից առնվազն՝ 80%: ՏՊ ԱՄ 52367966.8666-2020 Քաշն առնվազն՝ 300գ:
3	Մսաբանջարեղենայի ն պահածոներ/ տարբեր տեսակների	1. Գուլյաշ հնդկաձավարով տավարի մսով՝ մանրէազերծված պատրաստի մթերք Բաղադրությունը՝ միս տավարի, հնդկաձավար, գազար, սոխ գլուխ, բուսայուղ, տոմատի մածուկ, աղ, շաքար, դափնու տերև, սև հատիկավոր պղպեղ: Սննդային և էներգետիկ արժեքը 100 գ-ում՝ սպիտակուցներ՝ 5-7,5 գ, ճարպեր՝ 3-4 գ, ածխաջրեր՝ 11-16,7 գ, 100-124/414-518 կկալ/կՋ: Պահպանման պայմանները՝ պահել չոր, արևի ուղիղ ճառագայթներից պաշտպանված, լավ օդափոխվող շինությունում 0-ից +25 °C ջերմաստիճանի և օդի 75%-ից ոչ ավել հարաբերական խոնավության պայմաններում՝ 24 ամիս: Տարան բացելուց հետո պահել (4±2)°C – ի պայմաններում 24 ժամից ոչ ավել: Խորհուրդ է տրվում տաքացնել: Արտադրության ժամկետը նշված է տարայի հատակին/կափարիչին:

		Պահպանման ժամկետը մատակարարման օրվանից առնվազն՝ 80%: ՏՊ ԱՄ 52367966.8667-2020 Քաշն առնվազն՝ 300գ: 2. Կարտոֆիլի խյուս խոզի մսով՝ մանրէազերծված պատրաստի մթերք Բաղադրությունը՝ կարտոֆիլ, միս խոզի, բուսայուղ, աղ, սև պղպեղ: Սննդային և էներգետիկ արժեքը 100 գ-ում՝ սպիտակուցներ՝ 8 գ, ճարպեր՝ 3 գ, ածխաջրեր՝ 13 գ, 111/494 կկալ/կՋ: Պահպանման պայմանները՝ պահել չոր, արևի ուղիղ ճառագայթներից պաշտպանված, լավ օդափոխվող շինությունում 0-ից +25°C ջերմաստիճանի և օդի 75%-ից ոչ ավել հարաբերական խոնավության պայմաններում՝ 24 ամիս: Տարան բացելուց հետո պահել (4±2)°C -ի պայմաններում 24 ժամից ոչ ավել: Խորհուրդ է տրվում տաքացնել Արտադրության ժամկետը նշված է տարայի հատակին/կափարիչին: Պահպանման ժամկետը մատակարարման օրվանից առնվազն՝ 80%: ՏՊ ԱՄ 52367966.8667-2020 Քաշն առնվազն՝ 300գ: 3. Հարիսա՝ մանրէազերծված պատրաստի մթերք Բաղադրությունը՝ միս հավի, ցորենաձավար, կարագ սերուցքային, սև աղացած պղպեղ: Սննդային և էներգետիկ արժեքը 100 գ-ում՝ սպիտակուցներ՝ 5,4 գ, ճարպեր՝ 4,2 գ, ածխաջրեր՝ 19 գ, 135/567 կկալ/կՋ: Պահպանման պայմանները՝ պահել չոր, արևի ուղիղ ճառագայթներից պաշտպանված, լավ օդափոխվող շինությունում 0-ից +25°C ջերմաստիճանի և օդի 75%-ից ոչ ավել հարաբերական խոնավության պայմաններում՝ 24 ամիս: Տարան բացելուց հետո պահել (4±2)°C – ի պայմաններում 24 ժամից ոչ ավել: Խորհուրդ է տրվում տաքացնել: Արտադրության ժամկետը նշված է տարայի հատակին/կափարիչին: Պահպանման ժամկետը մատակարարման օրվանից առնվազն՝ 80%: ՏՊ ԱՄ 52367966.8667-2020 Քաշն առնվազն՝ 300գ: 4. Ոլոռի շիլա տավարի մսով՝ մանրէազերծված պատրաստի մթերք Բաղադրությունը՝ ոլոռ, միս տավարի, գազար, սոխ գլուխ, դափնու տերև, բուսայուղ, աղ, սև աղացած պղպեղ: Սննդային և էներգետիկ արժեքը 100 գ-ում՝ սպիտակուցներ՝ 8 գ, ճարպեր՝ 3 գ, ածխաջրեր՝ 13 գ, 111/460 կկալ/կՋ: Պահպանման պայմանները՝ պահել չոր, արևի ուղիղ ճառագայթներից պաշտպանված, լավ օդափոխվող շինությունում 0-ից +25°C ջերմաստիճանի և օդի 75%-ից ոչ ավել հարաբերական խոնավության պայմաններում՝ 24 ամիս: Տարան բացելուց հետո պահել (4±2)°C – ի պայմաններում 24 ժամից ոչ ավել: Խորհուրդ է տրվում տաքացնել: Արտադրության ժամկետը նշված է տարայի հատակին/կափարիչին: Պահպանման ժամկետը մատակարարման օրվանից առնվազն՝ 80%: ՏՊ ԱՄ 52367966.8667-2020

		Քաշն առնվազն՝ 300գ:
4	Բանջարեղենային, բուսական պահածոներ/ տարբեր տեսակների	1. Հնդկաձավարով շիլա՝ մանրէազերծված պատրաստի մթերք Բաղադրությունը՝ հնդկաձավար, աղ, հոտավետ պղպեղ, դափնու տերև Սննդային և էներգետիկ արժեքը 100 գ-ում՝ սպիտակուցներ՝ 3,9գ, ճարպեր՝ 0,9գ, ածխաջրեր՝25գ, 124/518 կկալ/կՋ: Պահպանման պայմանները՝ պահել չոր, արևի ուղիղ ճառագայթներից պաշտպանված, լավ օդափոխվող շինությունում 0-ից +25°C ջերմաստիճանի և օդի 75%-ից ոչ ավել հարաբերական խոնավության պայմաններում՝ 24 ամիս: Տարան բացելուց հետո պահել (4±2)°C – ի պայմաններում 24 ժամից ոչ ավել: Խորհուրդ է տրվում տաքացնել: Արտադրության ժամկետը նշված է տարայի հատակին/կափարիչին: Պահպանման ժամկետը մատակարարման օրվանից առնվազն՝ 80%: ՏՊ ԱՄ 52367966.8668-2020 Քաշն առնվազն՝ 300գ: 2. Կարտոֆիլ խաշած, կանաչիով՝ մանրէազերծված պատրաստի մթերք Բաղադրությունը՝ կարտոֆիլ, սամիթ, աղ, ջուր: Սննդային և էներգետիկ արժեքը 100 գ-ում՝ սպիտակուցներ՝ 1 գ, ճարպեր՝ 0,5 գ, ածխաջրեր՝ 11 գ, 52/219 կկալ/կՋ: Պահպանման պայմանները՝ պահել չոր, արևի ուղիղ ճառագայթներից պաշտպանված, լավ օդափոխվող շինությունում 0-ից +25°C ջերմաստիճանի և օդի 75%-ից ոչ ավել հարաբերական խոնավության պայմաններում՝ 24 ամիս: Տարան բացելուց հետո պահել (4±2)°C – ի պայմաններում 24 ժամից ոչ ավել: Խորհուրդ է տրվում տաքացնել: Արտադրության ժամկետը նշված է տարայի հատակին/կափարիչին: Պահպանման ժամկետը մատակարարման օրվանից առնվազն՝ 80%: ՏՊ ԱՄ 52367966.8668-2020 Քաշն առնվազն՝ 300գ:
5	Փլավ/ տարբեր տեսակների	1. Բրնձով փլավ հավի մսով՝ մանրէազերծված պատրաստի մթերք Բաղադրությունը՝ միս հավի, բրինձ, գազար, բուսայուղ, աղ: Սննդային և էներգետիկ արժեքը 100 գ-ում՝ սպիտակուցներ՝ 4-6 գ, ճարպեր՝ 2-5 գ, ածխաջրեր՝ 12-19 գ, 109-118/456-494 կկալ/կՋ: Պահպանման պայմանները՝ պահել չոր, արևի ուղիղ ճառագայթներից պաշտպանված, լավ օդափոխվող շինությունում 0-ից +25°C ջերմաստիճանի և օդի 75%-ից ոչ ավել հարաբերական խոնավության պայմաններում՝ 24 ամիս: Տարան բացելուց հետո պահել (4±2)°C – ի պայմաններում 24 ժամից ոչ ավել: Խորհուրդ է տրվում տաքացնել: Արտադրության ժամկետը նշված է տարայի հատակին/կափարիչին: Պահպանման ժամկետը մատակարարման օրվանից առնվազն՝ 80%: ՏՊ ԱՄ 52367966.8667-2020 Քաշն առնվազն՝ 300գ: 2. Փլավ՝ բանջարեղենով՝ մանրէազերծված պատրաստի մթերք Բաղադրությունը՝ բրինձ, կանաչ պղպեղ գազար, բուսայուղ, աղ: Սննդային և էներգետիկ արժեքը 100 գ-ում՝ սպիտակուցներ՝ 1 գ, ճարպեր՝ 3 գ, ածխաջրեր՝ 11 գ, 75/314 կկալ/կՋ:

		Պահպանման պայմանները՝ պահել չոր, արևի ուղիղ ճառագայթներից պաշտպանված, լավ օդափոխվող շինությունում 0-ից +25°C ջերմաստիճանի և օդի 75%-ից ոչ ավել հարաբերական խոնավության պայմաններում՝ 24 ամիս: Տարան բացելուց հետո պահել (4±2)°C – ի պայմաններում 24 ժամից ոչ ավել: Խորհուրդ է տրվում տաքացնել: Արտադրության ժամկետը նշված է տարայի հատակին/կափարիչին: Պահպանման ժամկետը մատակարարման օրվանից առնվազն՝ 80%: ՏՊ ԱՄ 52367966.8668-2020 Քաշն առնվազն՝ 300գ: 3. Մակարոն Պո Ֆլոտսկի՝ մանրէազերծված պատրաստի մթերք Բաղադրությունը՝ մակարոն, միս տավարի, բուսայուղ, սոխ գլուխ, սև աղացած պղպեղ, սամիթ, մաղադանոս, աղ: Սննդային և էներգետիկ արժեքը 100 գ-ում՝ սպիտակուցներ՝ 5 գ, ճարպեր՝ 7 գ, ածխաջրեր՝ 9 գ, 120/502 կկալ/կՋ: Պահպանման պայմանները՝ պահել չոր, արևի ուղիղ ճառագայթներից պաշտպանված, լավ օդափոխվող շինությունում 0-ից +25°C ջերմաստիճանի և օդի 75%-ից ոչ ավել հարաբերական խոնավության պայմաններում՝ 24 ամիս: Տարան բացելուց հետո պահել (4±2)°C –ի պայմաններում 24 ժամից ոչ ավել: Խորհուրդ է տրվում տաքացնել: Արտադրության ժամկետը նշված է տարայի հատակին/կափարիչին: Պահպանման ժամկետը մատակարարման օրվանից առնվազն՝ 80%: ՏՊ ԱՄ 52367966.8667-2020 Քաշն առնվազն՝ 300գ:
6	Կետչուպ/ անհատական փաթեթավորմամբ	Կետչուպ՝ քաղցր տեսակի, առնվազն՝ 20գ, սննդի համար նախատեսված անհատական պոլիմերային փաթեթավորմամբ: Լուծվող չոր նյութերի զանգվածային մասը ոչ պակաս 21%, բաղադրությունը՝ տոմատի մածուկ, շաքարավազ, աղ, սոխ, սխտոր, պղպեղ: Պարունակությունը՝ 100 գ-ում ածխաջրեր՝ 10-18գ, սպիտակուցներ 1.5գ, էներգետիկ արժեքը՝ 56-88 կկալ: Յուրաքանչյուր փաթեթի վրա՝ արտադրության ամսաթիվը (օր, ամիս, տարի): Պահպանման ժամկետը մատակարարման օրվանից առնվազն՝ 80%, ԳՕՍՏ Ռ-52141-2003:
7	Մեղր անհատական փաթեթավորմամբ	Բնական մեղր, ԳՕՍՏ 19792-2017, սննդի համար նախատեսված անհատական պոլիմերային փաթեթավորմամբ, յուրաքանչյուր փաթեթում, 20գ-ից ոչ պակաս, ջրի զանգվածային բաժինը 20%-ից ոչ ավել, վերականգնող շաքարների զանգվածային բաժինը ոչ պակաս 65%-ից, սախարոզայի զանգվածային բաժինը 5%-ից ոչ ավելի, դիաստազային թիվը՝ Գոտեի միավոր, 8%-ից ոչ պակաս, ՀՄՖ-ի զանգվածային բաժինը 25 մգ-ից ոչ ավելի, ջրի մասնաբաժինը 20%-ից ոչ ավելի: Պահպանման ժամկետն արտադրության օրվանից առնվազն՝ 24 ամիս, մատակարարման օրվանից առնվազն՝ 80%: Յուրաքանչյուր փաթեթի վրա՝ արտադրության ամսաթիվը (օր, ամիս, տարի): Անվտանգություն և պիտակավորում՝ համաձայն ТР ТС 021/2011 և 022/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի, 9-րդ հոդվածի:

8	Շաքարավազ/ անհատական փաթեթավորմամբ	Շաքարավազ՝ ԳՕՍ 33222-2015-ին համապատասխան, սննդի համար նախատեսված պոլիէթիլենային փաթեթավորմամբ, առնվազն՝ 5գ: Կատեգորիա ТС 1, ТС-2, սպիտակ, ազատ հոսող, քաղցր, առանց օտար հոտի և համի: Շաքարի լուծույթը պետք է լինի թափանցիկ, առանց աղտոտվածության և նստվածքների, սախարոզայի զանգվածային բաժինը 99,75%-ից ոչ պակաս, խոնավությունը՝ 0,10%-ից ոչ ավել, ֆեռոխառնուրդների մասնաբաժինը 0,0003%-ից ոչ ավելի: Պահպանման ժամկետն արտադրության օրվանից առնվազն՝ 24 ամիս, մատակարարման օրվանից առնվազն՝ 80%: Յուրաքանչյուր փաթեթի վրա նշվում է արտադրության տարեթիվը (օր, ամիս, տարի): Անվտանգություն և մակնշում ըստ ТР ТС 021/2011 և 022/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:
9	Կերակրի աղ/ անհատական փաթեթավորմամբ	Յոդացված աղ, ՀՍՏ 239-2005, 1գ-ից ոչ պակաս սննդի անհատական թղթե փաթեթներում: Պահպանման ժամկետն արտադրության օրվանից առնվազն՝ 24 ամիս, մատակարարման օրվանից առնվազն՝ 80%: Յուրաքանչյուր փաթեթի վրա՝ արտադրության տարեթիվը (օր, ամիս, տարի): Անվտանգություն և պիտակավորում՝ համաձայն ТР ТС 021/2011 և 022/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի, 9-րդ հոդվածի:
10	Թեյ/ անհատական փաթեթավորմամբ	Առաջին դասի սև թեյ, ԳՕՍ 32573-2013-ին համապատասխան, ոչ պակաս, քան 2 գ, սննդի համար նախատեսված պոլիէթիլենային փաթեթավորմամբ: Յուրաքանչյուր փաթեթի վրա «Սև թեյ, 2գ» մակագրությամբ: Պահպանման ժամկետն արտադրության օրվանից առնվազն՝ 24 ամիս, մատակարարման օրվանից առնվազն՝ 80%: Յուրաքանչյուր փաթեթի վրա՝ արտադրության ամսաթիվը (օր, ամիս, տարի) և մակագրությունը «RESCUE SERVICE OF THE MES OF RA»: Պիտակների ֆոնը քողարկված է: Անվտանգություն և պիտակավորում՝ համաձայն ТР ТС 021/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի, 9-րդ հոդվածի:
11	Հյութ/ անհատական փաթեթավորմամբ	Հյութ բազմամրգային, խյուսի և հյութի նվազագույն ծավալային մասը՝ առնվազն՝ 10%, սննդային արժեքը՝ 100գ-ում ածխաջրեր՝ 11,2-11,5գ, էներգետիկ արժեքը՝ 45/190կկալ/կՋ, սննդի համար նախատեսված թղթե անհատական փաթեթավորմամբ, առնվազն՝ 200 մլ, յուրաքանչյուր փաթեթի վրա մակնշում՝ բաղադրության և պատրաստման եղանակի վերաբերյալ: Պահպանման ժամկետը մատակարարման օրվանից առնվազն՝ 80%: Յուրաքանչյուր փաթեթի վրա՝ արտադրության ամսաթիվը (օր, ամիս, տարի): Անվտանգություն և պիտակավորում՝ համաձայն ТР ТС 021/2011 և 022/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի, 9-րդ հոդվածի:
12	Լուծվող սուրճ/ անհատական փաթեթավորմամբ	ԳՕՍ 32776-2014, սննդային պոլիպրոպիլենային անհատական փաթեթավորմամբ, առնվազն՝ 2գ: Պահպանման ժամկետն արտադրության օրվանից առնվազն՝ 24 ամիս, մատակարարման օրվանից առնվազն՝ 80%: Յուրաքանչյուր փաթեթի վրա՝ արտադրության ամսաթիվը (օր, ամիս, տարի) և «RESCUE SERVICE OF THE MES OF RA» մակագրությունը: Պիտակների ֆոնը քողարկված է: Անվտանգություն և պիտակավորում՝ համաձայն ТР ТС 021/2011 և 022/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի, 9-րդ հոդվածի:

13	Սև պղպեղ / անհատական փաթեթավորմամբ	Սև պղպեղ՝ ԳՕՍՏ 29050-91-ին համապատասխան, սննդի անհատական թղթե փաթեթներում առնվազն՝ 0,4գ: Պահպանման ժամկետն արտադրության օրվանից առնվազն՝ 24 ամիս, մատակարարման օրվանից առնվազն՝ 80%: Յուրաքանչյուր փաթեթի վրա՝ արտադրության ամսաթիվը (օր, ամիս, տարի) և «RESCUE SERVICE OF THE MES OF RA» մակագրությունը: Անվտանգություն և պիտակավորում՝ համաձայն TP TC 021/2011 և 022/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի, 9-րդ հոդվածի:
14	Խոնավ անձեռոցիկներ	Խոնավ հակաբակտերիալ անձեռոցիկներ անհատական փաթեթավորմամբ: Նախատեսված է ձեռքերի և մարմնի մաշկը մաքրելու և խնամելու համար: Բաղադրություն՝ ոչ կտորե գործվածք, ջուր, քլորհեքսիդին դիգլյուկոնատ Միայն արտաքին օգտագործման համար. Պահել երեխաներից անհասանելի վայրում +5°C-ից +25°C ջերմաստիճանում, հեռու ջեռուցման սարքերից, և արևի ուղիղ ճառագայթներից: Պահպանման ժամկետն արտադրության օրվանից առնվազն՝ 24 ամիս, մատակարարման օրվանից առնվազն՝ 80%: Քանակը՝ 1 հատ Թողարկում՝ ըստ ՀՄ 20.42.19-002-34089129-2020թ. Համապատասխանում է TP TC 009/2011 «Օծանելիքի և կոսմետիկ արտադրանքի անվտանգության մասին» պահանջներին:
15	Փաթեթավորման տուփ	Անջրանցիկ ստվարաթղթե տուփ չոր սննդի հավաքածուի համար՝ «ՀՀ ԱԻՆ Փրկարար ծառայություն» և <<Rescue Service of the MES of RA>> մակնշմամբ, տառատեսակի չափը համաձայնեցնել պատվիրատուի հետ:

* Հավաքածուներում ճաշատեսակներն ըստ քանակների և տեսակների պետք է բաշխված լինեն համամասնորեն:

N	Անվանումը	Չ/մ	Մեկ հավաքածուն (լրակազմը) առնվազն պետք է ներառի			
			Ընդամենը	այդ թվում՝		
				Նախաճաշ	Ճաշ	Ընթրիք
1	Փխրուն հաց /թխվածքաբլիթներ՝ 1-ին դասի ցորենից	գրամ	**250**	75	100	75
2	Պահածոյացված ապուրներ/ տարբեր տեսակների	գրամ	**300**		300	
3	Մսաբանջարեղենային պահածոներ/ տարբեր տեսակների	գրամ	**300**	300		
4	Բանջարեղենային, բուսական պահածոներ/ տարբեր տեսակների	գրամ	**300**			300
5	Փլավ/ տարբեր տեսակների	գրամ	**300**		300	
6	Կետչուպ/ անհատական փաթեթավորմամբ	գրամ	**20**		20	
7	Մեղր անհատական փաթեթավորմամբ	գրամ	**20**			20

8	Շաքարավազ/ անհատական փաթեթավորմամբ	գրամ	**30**	15		15
9	Կերակրի աղ/ անհատական փաթեթավորմամբ	գրամ	**6**	2	2	2
10	Թեյ/ անհատական փաթեթավորմամբ	գրամ	**2**			2
11	Հյութ/ անհատական փաթեթավորմամբ	մլ	**200**		200	
12	Լուծվող սուրճ/ անհատական փաթեթավորմամբ	գրամ	**2**	2		
13	Սև պղպեղ / անհատական փաթեթավորմամբ	գրամ	**1.2**	0.4	0.4	0.4
14	Խոնավ անձեռոցիկներ	հատ	**3**	1	1	1
15	Փաթեթավորման տուփ	հատ	**1**			

ԳՆՈՐԴ
Արտակարգ իրավիճակների նախարարություն
ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյան փող. 109/8
ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011001352
ՀՎՀՀ 00153247

Լ. Միրզախանյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Արմիֆուդ» ՍՊԸ
ՀՀ ք.Երևան, Բաշինջաղյան փ.173, բն 11
ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 2500010910090100
ՀՎՀՀ՝ 01306154

Խ. Օհանյան
/ստորագրություն/
Կ.Տ